

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԿՈՄԻՏԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ

ՎԱՋԳԷՆ ԾԱՌԱՑ ՑԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՋԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՋԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ԴԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԿՈՄԻՏԱՍԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՏԷՐ ՍՏԵՓԱՆԵԱՆ, ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ, ՀՈԳԵՒՈՐ ՀԱՐՑ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՀՕՏԻՆ ՄԵՐՈՒՄ, ՀԱՐԱՋԱՏԻՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ԳԱՀԷ ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԵՒ Ի ԳԱՀԱԿԱԼԷ ՆՈՐԻՆ ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Ավելի քան տասնվեց դարերու փառավոր պատմություն ունի մեր Ս. եկեղեցին և անոր հիմնադրը ու գլուխը հանդիսացող Մայր Աթոռ Ս. էջմիածինը: Ս. էջմիածինը Աստուծո պարգևն է մեր ժողովրդին տրված, որպեսզի անով ապրի, պահպանվի ու երբեք չմեռնի հայ հոգին, ժողովուրդը մեր: Փրկչի Իշխան Սեղանին վերև պլպլացող Ս. Լուսավորչի կանթեղը իր լույսը կսփռե մեր ամբողջ Ազգին վրա, մեր բոլոր եկեղեցիներուն վրա, մեր բոլոր հավատացյալներուն վրա, ուր որ ալ գտնվին անոնք: Այդ կանթեղը Աստուծո ձեռքով է վառված և անոր լույսը երբեք չի շիջիր, չի տկարանար:

Սիրելի՛ հարազատ որդիք Մեր, որ կապրիք ի Վրաստան, ձեզ ավետիս կուտանք, թե սույն հայրապետական կոնդակով Վրաստանի հայոց հոգևոր թեմի առաջնորդ կնշանակենք Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը, զոր

ձեր միջնորդությամբ և Մայր Աթոռոս Գերագույն Հոգևոր Խորհրդի առաջարկությամբ ձեռնադրեցիք և օծեցիք եպիսկոպոս 24 նոյեմբեր 1957-ին Միածնաէջ Ս. Տաճարին մեջ:

Նորապսակ Տ. Կոմիտաս եպիսկոպոս շատերուդ ծանոթ է արդեն իբրև հավատավոր և անձնվեր հոգևորական, որ Քրիստոսի և մեր Ազգի սիրով ոգեշնչված, տարիներե ի վեր կծառայե մեր եկեղեցիին և ժողովրդին: Մենք վստահ ենք, թե դուք զայն պիտի ընդունիք սիրով և ուրախությամբ, և ձեր կարելին պիտի ընեք, որ սրբազանը իրեն հանձնված առաքելությունը հաջողությամբ կատարե, իբրև հոգևոր առաջնորդ Վրաստանի բոլոր հայ եկեղեցիներուն և կրոնական համայնքներուն:

Ի սրտե կմաղթենք, որ Տերը նոր ուժ, նոր եռանդ և երկար կյանք պարգևե Տ. Կոմիտաս եպիսկոպոսին, որպեսզի կարողանա ձեր բոլորին հոգիները առաջնորդել դեպի Ս. Ավետարանին լույսը և դեպի մեր Տիրոջ ու Փրկչի սերը և խաղաղությունը, որ ճշմարիտ աղբյուրն է մարդկային երջանկության և հավիտենական կյանքին:

Կմաղթենք նաև ձեզ բոլորիդ, քահանա հայեր, խորհրդի անդամներ և հավատացյալ զավակներ Մեր, քաջառողջություն հոգվո և մարմնո և երկնային օգնականություն և շնորհք, որպեսզի սիրով միաբան ապրիք, հավատարիմ մնաք մեր նախնյաց սուրբ հավատքին, մեր սրբություններուն, մեր քաղցր լեզվին, մեր Մայր Աթոռին և Մայր Հայրենիքին:

«ԱՅՍՈՒՀԵՏԵՒ ԵՂԲԱՐՔ, ՈՂՋ ԼԵՐՈՒՔ, ՀԱՍՏԱՏՈՒՆ ԿԱՑԷՔ՝ ՄԽԻԹԱՐՆՅԱՐՈՒՔ՝ ՄԻԱԲԱՆ ԼԵՐՈՒՔ՝ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԱՐԱՐԷՔ. ԵՒ ԱՍՏՈՒԱԾ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՍԻՐՈՅ ԵՂԻՑԻ ԸՆԴ ՁԵԶ»:

Ի սրտե կմաղթենք նաև մեր դրացի վրաց եղբայրական ազգիվ ժողովրդին երջանիկ կյանք ու բարորություն, և կաղոթենք չքնաղ Վրաստանի վերելքի ու ծաղկման համար:

«ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ ՍՍՏՈՒԾՈՅ ԵՒ ՇՆՈՐՀՔ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՂԻՑԻՆ ԸՆԴ ԱՄԵՆԵՍԻՆ. ԱՄԷՆ»:

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 25-ն նոյեմբերի
1957 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԷ,
ի վանս Սրբոյ Էջմիածնի